ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» հունիսի 2022թ. № **62** - Ա

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-046-0220-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24052022-06-0041 վկայականը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Սպիտակ համայնք, գ. Լուսաղբյուր 9-րդ փողոց, թիվ 32 հողամաս» հասցեում գտնվող 06-046-0220-0011 կադաստրային ծածկագրով 0,34629 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, գյուղատնտեսական արտադրական շինություն կառուցելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2. Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 2 262 658,86 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 653,4 ՀՀ դրամ):

3. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի չափագրման և պետական գրանցման ծախսերը:

ԿՈՂՄ (14)	ԴԵՄ (1)	ՁԵՌՆՊԱՀ (1)
ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ	ԳԱԳԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ	ԿԱՐԻՆԵ ԴԻԼԱՔՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ԱՄԻՐՅԱՆ

ՄԱՆՈՒՇ ԱԹՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունիսի 10
ք. Սպիտակ